

# **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՕՐԵՆՔԸ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 6-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ կետերով.

3.1) **պատճեն**՝ ձեռագիր կամ տպագիր փաստաթղթի բնօրինակի պատկերի ճշգրիտ կամ հարաբերականորեն ճշգրիտ վերարտադրությունը թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա.

3.2) **էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակ**՝ նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով գրանցված տեղեկատվություն, եթե էլեկտրոնային փաստաթուղթը փոփոխության չի ենթարկվել այն պահից, երբ այն տրվել է պահպանության.

3.3) **էլեկտրոնային փաստաթղթի պատճեն**՝ էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակի վերարտադրությունը թղթային կրիչի վրա:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

1) լրացնելի հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Քրեական գործի կամ քրեական գործի նյութերի կորստի, վնասման կամ ոչնչացման դեպքում համապատասխանաբար վերադաս դատախազը կամ դատարանը որոշում է կայացնում դրանք վերականգնելու մասին և միջոցներ ձեռնարկում քրեական գործով վարույթի պատշաճ ընթացքն ապահովելու ուղղությամբ:

Քրեական գործի կամ քրեական գործի նյութերի վերականգնումը կատարվում է գոյություն ունեցող ձեռագիր կամ տպագիր կամ էլեկտրոնային փաստաթղթերի բնօրինակներից պատճեններ հանելով կամ քննչական և այլ դատավարական գործողությունները կրկին կատարելով:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «կորցրած վարույթի վերականգնման» բառերը փոխարինել «քրեական գործի կամ քրեական գործի նյութերի կորստի, վնասման կամ ոչնչացման» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հանրապետության նախագահ**

**Ա. Սարգսյան**

2021թ. \_\_\_\_\_

Երևան

ՀՕ- -Ն